ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2022 թվականի N 228-Ա

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 6-ի N 452-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի ծառայության *2022* թվականի տարեկան ծրագրի *երրորդ եռամսյակի* աշխատանքային կատարողականն ապահովելու նպատակով իրականացվող աուդիտորական առաջադրանքները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածում նշված ներքին աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական առաջադրանքների իրականացումը վերապահել ներքին աուդիտի ծառայության աշխատանքային խմբի անդամներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022 թվականի հուլիսի 15
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2020 թվականի հուլիսի 15-ի N 228-Ա որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

Ներքին աուդիտի ենթակա միավորներ 2022 թվական			
Երրորդ եռամսյակ			
Հ/հ	**Անվանումը**	**Հասցեն**	**Աուդիտի տեսակ**
1	«Կապուտանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Կապուտան	Համապատասխանության աուդիտ
2	«Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Արագյուղ, 1-ին նրբանցք 23	Համապատասխանության աուդիտ
3	«Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Մրգաշեն, 2-րդ փողոց 2	Համապատասխանության աուդիտ
4	«Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ք. Չարենցավան, փ. Երիտասարդության թիվ 17	Համապատասխանության աուդիտ
5	«Արտավազի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Արտավազ	Համապատասխանության աուդիտ
6	«Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Մայակովսկի, փ. 9-րդ, 2-րդ փակուղի 2/4	Համապատասխանության աուդիտ
7	«Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Արամուս	Համապատասխանության աուդիտ
8	«Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Կոտայք, փ. Կենտրոնական 4	Համապատասխանության աուդիտ